



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ

2025թ.




2024Թ.-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

- Համաշխարհային տնտեսություն.** դեկտեմբերին ՀՀ գործընկեր երկրներից ԱՄՆ-ում և ԵԳ-ում տնտեսական ակտիվության շարժիչ ուժը շարունակում է մնալ ծառայությունների ոլորտը. մշակող արդյունաբերությունը դեկտեմբերին ևս անկում է գրանցել: Արդյունքում, ԱՄՆ-ում գրանցվել է տնտեսական ակտիվության աճ, իսկ ԵԳ-ում՝ անկում: Մինչդեռ Չինաստանում և ՌԴ-ում գրանցվել է տնտեսական ակտիվության աճ՝ պայմանավորված երկու ոլորտների աճով: Նավթի, պղնձի, պարենային ապրանքների միջազգային գները նախորդ ամսվա համեմատ նվազել են:
- Տնտեսության արտաքին հատված.** Ընթացիկ տարվա տասը ամիսներին արձանագրված բարձր աճի տեմպերից հետո վերջին երկու ամիսներին արձանագրվել է արտահանման և ներմուծման կտրուկ նվազում: Սակայն և՛ արտահանումը, և՛ ներմուծումը 2024 թ.-ին նախորդ տարվա նկատմամբ արձանագրել են երկնիշ աճեր: Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ ՀՀ դրամը երեք անընդմեջ ամիս արժևորվել է երեք հիմնական արժույթների նկատմամբ: Այսպիսով՝ դոլարի նկատմամբ արժևորման չափը կազմել է 2, եվրոյի նկատմամբ՝ 6.3, իսկ ռուբլու նկատմամբ՝ 15.3 տոկոս: Տարեկան արդյունքներով ՀՀ դրամի փոխարժեքը գրեթե չի փոփոխվել դոլարի և եվրոյի նկատմամբ, իսկ ռուսական ռուբլու դիմաց արժևորվել է, սակայն ավելի թույլ տեմպով, քան նախորդ տարի (2023թ. 39.4 տոկոսի դիմաց՝ 9.6): Դեկտեմբեր ամսին ՀՀ այցելած զբոսաշրջիկների թվաքանակը նվազել է 1.9%-ով: Իսկ 2024թ. ՀՀ այցելած զբոսաշրջիկների թվաքանակը 2023թ. նկատմամբ նվազել է 7.6%-ով:
- Տնտեսության իրական հատված.** տնտեսական ակտիվությունը դեկտեմբերին կազմել է 4.7%՝ նոյեմբերի նկատմամբ արագանալով 3.2 տոկոսային կետով՝ հիմնականում պայմանավորված արդյունաբերության նվազման տեմպերի 4.2 տոկոսային կետով դանդաղմամբ և ծառայությունների 7.1 տոկոսային կետով արագացմամբ: 12 ամսյա գնաճը կազմել է 1.5%, միջին գնաճը՝ 0.3%, իսկ բնականոն գնաճը՝ 0.9%:
- Տնտեսության ֆինանսական հատված.** բանկային համակարգի ֆինանսական միջնորդությունը շարունակել է առաջանցիկ լինել տնտեսական ակտիվության համեմատ: Վարկերի ծավալների աճը կազմել է 24.2%, իսկ ավանդներինը՝ 13.9%: Ավանդների տոկոսադրույքները նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ չեն փոխվել, մինչդեռ վարկերի տոկոսադրույքները որոշակի աճել են: Դեկտեմբերին, մեծապես պայմանավորված դրամավարկային պայմանների շարունակական մեղմացման ազդեցություններով, պարտատոմսերի տոկոսադրույքները նվազել են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ:
- Տնտեսության հարկաբյուջային հատված.** դեկտեմբերին հարկային եկամուտները ցածր են եղել 2023թ.-ի դեկտեմբերի ցուցանիշից (պայմանավորված վերջինում առկա միանգամյա գործոնների ազդեցությամբ), իսկ պետական բյուջեի ծախսերի աճի տեմպը կազմել է 9.3%: 2024 թ. պետական բյուջեի պակասուրդը կազմել է 376.1 մլրդ դրամ՝ պետական բյուջեով նախանշված 482.9 մլրդ դրամ:

1. Միջազգային զարգացումներ: Դեկտեմբերին համաշխարհային տնտեսությունը զարգացել է արագ աճի, բարձր գնաճի և վստահության անկման ուղղություններով: Դեկտեմբեր ամսին համաշխարհային տնտեսական ակտիվության աճի արագացումը շարունակել է պայմանավորված լինել ծառայությունների ոլորտի աճով և հիմնական շարժիչ ուժը ֆինանսական ծառայություններն են եղել: Ի հակադրություն ծառայությունների ոլորտի աճի՝ մշակող արդյունաբերության ոլորտը անկում է գրանցել: Համաշխարհային զբաղվածությունը դեկտեմբերին աճել է՝ պայմանավորված ծառայությունների

ոլորտում գրանցված զբաղվածության աճով, որին հակազդել են մշակող արդյունաբերության ոլորտում զբաղվածների կրճատումները: Զբաղվածների կրճատումներն առավելապես դրսևորվել են ԱՄՆ-ում, Չինաստանում և Ճապոնիայում: Համաշխարհային գործարար վստահության անկումը վկայում է առաջիկա տարում գործարար ակտիվության հնարավոր ցածր աճերի մասին՝ պայմանավորված ԱՄՆ քաղաքականության փոփոխություններով ձևավորված անորոշությամբ: Դեկտեմբերին ԱՄՆ-ում գրանցված տնտեսական ակտիվության աճը, հիմնականում, պայմանավորված է եղել ծառայությունների ոլորտի արագ աճով, իսկ մշակող արդյունաբերության ոլորտում հուլիսից ի վեր գրանցված անկման միտումը պահպանվել է: Սակայն առաջիկա տարվա վերաբերյալ դրական սպասումները մշակող արդյունաբերության ոլորտում գործող արտադրողներին «խրախուսել է» ավելացնելու անձնակազմի թվաքանակը: Ծառայությունների ոլորտում նույնպես զբաղվածության աճ է գրանցվել: Եվրագոտում դեկտեմբերին գրանցված տնտեսական ակտիվության անկումը պայմանավորված է եղել մշակող արդյունաբերության շարունակական անկմամբ, իսկ ծառայությունների ոլորտը նախորդ ամսվա համեմատ վերականգնվել է: Ի հակադրություն ծառայությունների ոլորտում աշխատակիցների թվաքանակի թույլ աճի՝ արտադրական ոլորտում աշխատատեղերի կտրուկ անկման արդյունքում դեկտեմբերին Եվրագոտում զբաղվածության ընդհանուր մակարդակի անկում է գրանցվել: Արժույթային միության երեք խոշոր տնտեսություններում՝ Գերմանիայում, Ֆրանսիայում և Իտալիայում, գրանցված գործարար ակտիվության անկումը հակազդել է միության մյուս երկրներում գրանցված աճին. Իսպանիան շարունակում է մնալ Եվրագոտու ամենաարագ աճող տնտեսությունը: Չինաստանում դեկտեմբերին տնտեսական ակտիվության աճ է գրանցվել՝ պայմանավորված ծառայությունների և մշակող արդյունաբերության ոլորտներում նախորդ ամսվա համեմատ աճի ավելի դանդաղ տեմպերով: Զբաղվածության մակարդակը նվազել է՝ պայմանավորված մասնավոր հատվածի լավատեսության անկմամբ: Դեկտեմբերին ՌԴ-ում գրանցվել է տնտեսական ակտիվության աճի տեմպի դանդաղում՝ պայմանավորված ծառայությունների և մշակող արդյունաբերության թույլ աճով: Զբաղվածության ավելի բարձր մակարդակ է գրանցվել ծառայությունների ոլորտում, իսկ գործարար վստահության անկման ֆոնին մշակող արդյունաբերության ոլորտում գրանցվել է զբաղվածության կրճատում:

Գծապատկեր 1.1. Composite PMI-ի միջուկները




Դեկտեմբերին ԱՄՆ-ում գնաճն արագացել է՝ կազմելով 2.9% (նոյեմբերին՝ 2.7%), որը մասամբ պայմանավորված է եղել նախորդ տարվա ցածր բազայով և սննդամթերքի ու տրանսպորտի գների աճով: Եվրագոտում նույնպես դեկտեմբերին գնաճի արագացում է գրանցվել՝ 2.4% (նոյեմբերին՝ 2.2%): Գնաճի գրանցված մակարդակը որոշ չափով պայմանավորված է եղել բազային էֆեկտով, ինչպես նաև էներգակիրների և ծառայությունների գների աճով: Չինաստանում, չնայած չինական կառավարության կողմից իրականացված խթանող միջոցառումների և կենտրոնական բանկի խթանող դիրքին, դեկտեմբերին ևս գրանցվել է գնաճի դանդաղում՝ 0.1% (նոյեմբեր՝ 0.2%): Գնաճի դանդաղումը պայմանավորված է եղել սննդամթերքի և



տրանսպորտի գների անկմամբ: ՌԴ-ում գնաճի տեմպերը նախորդ ամսվա համեմատ արագացել են՝ կազմելով 9.5%՝ հիմնականում պայմանավորված սննդամթերքի և ծառայությունների գների աճով:



Գործընկեր երկրների կենտրոնական բանկերի կողմից իրականացվող զսպող քաղաքականությունն աստիճանաբար գնում է մեղմացման ուղղությամբ՝ բացառությամբ ՌԴ-ի: ԱՄՆ ԴՊՀ-ն հունվարի որոշմամբ պահպանել է դեկտեմբերին սահմանած քաղաքականության տոկոսադրույքի 4.25-4.5% միջակայքը: Եվրոպական կենտրոնական բանկը, հունվարին կայացված որոշմամբ վերաֆինանսավորման տոկոսադրույքը դեկտեմբերին սահմանված 3.15%-ից նվազեցնելով 0.25 տոկոսային կետով, սահմանել է 2.9% մակարդակում: Չինաստանի կենտրոնական բանկի կողմից շարունակվում է պահպանվել քաղաքականության տոկոսադրույքի սահմանված 3.1% մակարդակը: ՌԴ կենտրոնական բանկը շարունակել է պահպանել դրամավարկային քաղաքականության զսպող դիրքը. հոկտեմբերին հիմնական տոկոսադրույքը 21% սահմանելուց հետո դեկտեմբերի որոշմամբ պահպանել է նույն մակարդակում՝ պայմանավորված վարկային ակտիվության դանդաղմամբ:

Գծապատկեր 1.2. Գնաճն ու դրամավարկային քաղաքականության արձագանքը գործընկեր երկրներում



Նավթի միջազգային գինը դեկտեմբերին նախորդ ամսվա նկատմամբ նվազել է 0.8%-ով, պղնձի գինը՝ 1.8%-ով, իսկ պարենի միջազգային գինը՝ 0.4%-ով: Ընդհանուր առմամբ, նավթի միջազգային գինը 2024թ. նախորդ տարվա համեմատ նվազել է 2.3%-ով, պարենի միջազգային գինը՝ -2.1%-ով, իսկ պղնձի գինը աճել է 7.7%-ով: Նախորդ ամսվա համեմատ նավթի գնի նվազումը պայմանավորված է եղել նավթի առաջարկի ավելցուկի վերաբերյալ մտահոգություններով և դոլարի ամրապնդմամբ: Պղնձի միջազգային գնի նվազումը պայմանավորող հիմնական գործոններից է եղել դոլարի ինդեքսի աճը: Պարենային ապրանքների համաշխարհային գնի նվազումը պայմանավորված է եղել բուսական յուղերի, կաթնամթերքի, շաքարավազի և հացահատիկի գների նվազմամբ:


Գծապատկեր 1.3. Նավթի, մետաղների և պարենի գների զարգացումներ



2. Արտաքին հատվածի զարգացումներ: 2024թ. տասը ամիսների անընդմեջ բարձր աճի տեմպերից հետո նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին արձանագրվել է արտահանման և ներմուծման կտրուկ անկում: Դեկտեմբերին արտահանումը նվազել է 48.6%-ով (նախորդ ամսվա նվազումը՝ 33.7%), որին ամենամեծ նպաստումն ունեցել է թանկարժեք մետաղների արտահանման նվազումը (հիմնականում դեպի ԱՄԷ արտահանումը): Ներմուծումը նվազել է 26.5% (նախորդ ամսվա նվազումը՝ 18.5%):

2024թ. արդյունքներով ՀՀ ապրանքների արտահանումը նախորդ տարվա նկատմամբ աճել է 53.1%-ով, իսկ ներմուծումը՝ 33.8%-ով:


Գծապատկեր 2.1. Արտահանման և ներմուծման միջուումները, մլն դոլար



Ընթացիկ տարվա դեկտեմբեր ամսին արձանագրվել է ՀՀ այցելած զբոսաշրջիկների թվաքանակի նվազում: Դեկտեմբեր ամսին արձանագրվել է 1.9% նվազում, իսկ 2024թ.-ին նախորդ տարվա նկատմամբ՝ 7.6%, որին ամենամեծ նպաստումն են ունեցել ՌԴ-ից այցելած զբոսաշրջիկների թվաքանակի նվազումը: Իսկ նվազմանը հիմնականում հակազդել է Հնդկաստանից, Իրանից և Չինաստանից այցելած զբոսաշրջիկների աճը:

2024թ. արդյունքներով ՀՀ այցելած զբոսաշրջիկների թվաքանակը նախորդ տարվա համեմատ նվազել է 7.6%-ով:

Գծապատկեր 2.2 Դեպի ՀՀ զբոսաշրջիկների հոսքերը հունվար-դեկտեմբերին՝




Դեկտեմբերին ոչ առևտրային բնույթի դրամական փոխանցումների զուտ ներհոսքը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 1.1%-ով: Դեկտեմբերին նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ ՌԴ-ից զուտ դրամական փոխանցումները նվազել են շուրջ 5.6%-ով, իսկ այլ երկրներից գրանցվել է 2.5% աճ:

¹ 2024թ. զբոսաշրջիկների թվաքանակը նախնական գնահատական է:




Հունվար-դեկտեմբերին զուտ դրամական փոխանցումները նվազել են 34.8%-ով, ընդ որում՝ ՌԴ-ից նվազումը կազմել է 52.3%, իսկ այլ երկրներից՝ 3.5%:

Գծապատկեր 2.3. Ֆիզիկական անձանց ոչ առևտրային բնույթի փոխանցումների զուտ ներհոսքը



ՀՀ դրամը դոլարի, եվրոյի և ռուբլու նկատմամբ դեկտեմբեր ամսին արժևորվել է: Մասնավորապես՝ դեկտեմբերին նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամն արժևորվել է 2, եվրոյի նկատմամբ՝ 6.3, իսկ ռուբլու նկատմամբ՝ 15.3 տոկոսով: Ընդհանուր առմամբ, եթե 2023թ.-ին նախորդ տարվա համեմատ ՀՀ դրամը արժևորված էր երեք հիմնական արժույթների նկատմամբ, ապա ընթացիկ տարում գրանցվել է չնչին արժեզրկում դոլարի և եվրոյի նկատմամբ (0.1 տոկոս), իսկ ռուբլու նկատմամբ դրամի արժևորումը շարունակվել է՝ կազմելով 9.6 տոկոս:


Գծապատկեր 2.4. ՀՀ դրամի անվանական փոխարժեքի դինամիկան հիմնական արժույթների նկատմամբ




3. ՀՀ տնտեսական զարգացումներ: Տնտեսական ակտիվությունը դեկտեմբերին կազմել է 4.7%՝ նույնների նկատմամբ արագանալով 3.2 տոկոսային կետով՝ հիմնականում պայմանավորված արդյունաբերության (հատկապես՝ հիմնային մետաղների արտադրության) նվազման տեմպերի շուրջ 4.2 տոկոսային կետով դանդաղմամբ և ծառայությունների 7.1 տոկոսային կետով արագացմամբ: Արդյունքում՝ հունվար-դեկտեմբերին գրանցվել է տնտեսական ակտիվության 8.0% աճ: Արդյունաբերության՝ նախորդ տարվա նույններից սկիզբ առած բարձր աճերը ապրիլ-հունիս ամիսներին կտրուկ դանդաղել են, հուլիսից նկատվել է արդյունաբերության աճի տեմպի արագացման միտում, սակայն նույններ-դեկտեմբերին կրկին դանդաղել են՝ պայմանավորված հիմնականում ոսկերչական արտադրատեսակների և հիմնային մետաղների արտադրության նախորդ տարվա բարձր բազայով: Վերջին ամիսների զարգացումների արդյունքում հունվար-դեկտեմբերին ՏԱՑ-ի աճն ապահովել են հիմնականում ծառայությունները² (նպաստումը՝ 5.4 տոկոսային կետ), առևտուրը (նպաստումը՝ 2.4 տոկոսային կետ) և շինարարությունը (նպաստումը՝ 1.1 տոկոսային կետ): Արդյունաբերության աճը ևս շարունակել է նպաստել տնտեսական ակտիվությանը, սակայն առավել ցածր տեմպերով (նպաստումը՝ 0.8 տոկոսային կետ):

Հունվար-նոյեմբերին արդյունաբերության աճը պայմանավորված է եղել հիմնականում հիմնային մետաղների արտադրության աճով, շինարարության աճը (ըստ ֆինանսավորման աղբյուրների)՝ բնակչության, կազմակերպությունների և պետական բյուջեի միջոցներով իրականացված շինարարության աճով, ծառայությունների աճը՝ ֆինանսական և ապահովագրական գործունեության աճով, իսկ առևտրի աճը՝ մեծածախ առևտրի աճով:

Գծապատկեր 3.1. ՏԱՑ և տնտեսության ճյուղերի աճերը (դիսկրետ, %)




Գծապատկեր 3.2. ՏԱՑ և տնտեսության ճյուղերի աճերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (կուտակային, %)



Տնտեսական ակտիվության պայմաններում դեկտեմբերին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 6.2%-ով՝ կազմելով 353,769 դրամ (ընդ որում՝ պետական հատվածում աճել է 4.6%-ով՝ կազմելով 314,226 դրամ, իսկ ոչ պետական հատվածում՝ 6.6%-ով՝ կազմելով 369,072 դրամ): Իրական աշխատավարձը 1.5% գնաճի պայմաններում դեկտեմբերին աճել է 4.7%-ով:

Նույններին պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվը նվազել է 17.4%-ով, իսկ վարձու աշխատողների թիվն աճել է 5.9%-ով՝ կազմելով 786,970 մարդ՝ պայմանավորված հիմնականում շինարարության, առևտրի, պետական կառավարման և պաշտպանության, պարտադիր սոցիալական ապահովության, ինչպես նաև կրթության ոլորտներում աշխատողների թվի աճով:

Գծապատկեր 3.3. Միջին ամսական աշխատավարձ, վարձու աշխատողներ, (դիսկրետ)




ՀՀ անշարժ գույքի շուկայում դեկտեմբեր ամսին գները շարունակել են աճել, չնայած աճի տեմպը նույնների նկատմամբ դանդաղել է: Երևան քաղաքում բազմաբնակարան շենքերի բնակարանների շուկայական միջին գների աճը նույնների համեմատ ըստ վարչական շրջանների տատանվել է -0.8-ից 0.7% շրջանակներում, իսկ նախորդ տարվա դեկտեմբեր ամսվա նկատմամբ՝ 1.0-ից 6.9% շրջանակներում՝ ամենաբարձր գինը գրանցելով Կենտրոն վարչական շրջանում (1մ² մակերեսի համար՝ 909,100 դրամ, դանդաղումը նույնների նկատմամբ՝ -0.2%, աճը նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ՝ 1.2%), իսկ ամենացածր գինը՝ Նուբարաշեն վարչական շրջանում (1մ² մակերեսի համար՝ 236,500 դրամ, աճը նույնների նկատմամբ՝ 0.6%, աճը նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ՝ 4.6%): Մարզերում բնակարանների շուկայական միջին գների աճը նույնների համեմատ տատանվել է -1.5-ից 5.4% շրջանակներում, իսկ նախորդ տարվա դեկտեմբեր ամսվա նկատմամբ՝ -2.1-ից 23.6%՝ ամենաբարձր գինը գրանցելով Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքում (1մ² մակերեսի համար՝ 455,000 դրամ, դանդաղումը նույնների նկատմամբ՝ -0.7%, աճը նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ՝ 4.6%), իսկ ամենացածր գինը՝ Լոռու մարզի Թումանյան քաղաքում (1մ² մակերեսի համար՝ 27,500 դրամ, աճը նույնների նկատմամբ՝ 0.0%, աճը նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ՝ 5.8%):

² Ծառայությունների թողարկման ցուցանիշները տարվա սկզբից վերանայվել են դեպի վեր՝ պայմանավորված ՏՏ ոլորտի համար ԲՏԱ նախարարության կողմից 30.01.2025թ. դրությամբ ճշգրտմամբ:




4. Դրամավարկային քաղաքականություն: Դեկտեմբերին դիտվել է թույլ գնաճային միջավայր: 12 ամսյա գնաճը կազմել է 1.5%, միջին գնաճը (տարեսկզբից կուտակային)³ 0.3%, իսկ բնականոն գնաճը՝ 0.9%: Դեկտեմբերի 10-ին ՀՀ ԿԲ-ը նվազեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ սահմանելով այն 7% մակարդակում:

Գծապատկեր 4.1. Գնաճը և վերաֆինանսավորման տոկոսադրույքը (ամսական միջին)



Դեկտեմբերին 12 ամսյա գնաճը հիմնականում պայմանավորվել է ծառայությունների (0.8 տոկոսային կետ) ու սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքների (0.8 տոկոսային կետ), ալկոհոլային խմիչքների ու ծխախոտային արտադրատեսակների (0.2 տոկոսային կետ) դրական և ոչ պարենային ապրանքների (-0.4 տոկոսային կետ) բացասական նպաստումների հակակշռմամբ: 12 ամսյա գնաճին ամենամեծ նպաստումն ունեցել են սոցիալական պաշտպանության, ապահովագրության և հանգստի կազմակերպման համալիր ծառայություններ ապրանքախմբերը: Ամենամեծ բացասական նպաստումները արձանագրվել են անձնական խնամքի, փոստային ծառայությունների և բնակարանի խնամքի ապրանքների ու ծառայությունների ապրանքախմբերում:


Գծապատկեր 4.2. 12 ամսյա գնաճին նպաստումները, %-ային կետ



5. Ֆինանսական միջնորդություն: Դեկտեմբերին բանկային համակարգի ֆինանսական միջնորդությունը շարունակել է առաջանցիկ լինել տնտեսական ակտիվության համեմատ՝ բնորոշվելով նաև ավանդների նկատմամբ վարկերի առաջանցիկ աճով: Այսպես, ի տարբերություն նախորդ տարվա դեկտեմբերի, վարկերի ծավալների աճը (24.2%) գերազանցել է ավանդների ծավալների աճին (13.9%): Ռեզիդենտների վարկերի աճը կազմել է 27.1%, իսկ ռեզիդենտների ավանդների աճը՝ 15%: Ընդ որում, և՛ ռեզիդենտների վարկերի, և՛ ավանդների դեպքում ամենամեծ նպաստումն ունեցել են տնային տնտեսություններին ուղղված վարկերը: Վարկերի բարձր աճը ըստ ոլորտների շարունակել է ընդգրկուն լինել. ամենաբարձր նպաստումը ապահովել են սպառողական (նպաստումը՝ 7.8 տոկոսային կետ, աճը՝ 33.3%), հիփոթեքային (նպաստումը՝ 7.6 տոկոսային կետ, աճը՝ 30.7%) և շինարարության (նպաստումը՝ 3.5 տոկոսային կետ, աճը՝ 32.7%) վարկերը: Տնտեսության մյուս ոլորտների վարկավորումը ևս աճում է բարձր տեմպերով: Ընդ որում, աճի միտում է արձանագրում նաև արդյունաբերության վարկավորումը, որին նպաստել են ինչպես հանքագործական արդյունաբերության, մասնավորապես՝ մետաղական հանքաքարի արդյունահանմանն ուղղված վարկերը, այնպես էլ մշակող արդյունաբերության ոլորտի վարկերը: Ոչ


ռեզիդենտների ավանդներն աճել են շուրջ 136.6 մլրդ դրամով (10% աճ) նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ: Ի հավելումն նշենք, որ ոչ ռեզիդենտների ավանդները շարունակում են պահպանվել պատմականորեն բարձր մակարդակում (2022թ.-ի փետրվարի ցուցանիշից բարձր շուրջ 622.1 մլրդ դրամով):

Գծապատկեր 5.1. Բանկային համակարգի վարկերի և ավանդների 12 ամսյա աճերը, %



ՀՀ պետական պարտատոմսերի տոկոսադրույքները դեկտեմբերին նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ որոշակի նվազել են, ավանդների տոկոսադրույքները հիմնականում անփոփոխ են, մինչդեռ վարկերի դեպքում նկատելի է որոշակի աճի միտում: Դեկտեմբերին, պայմանավորված դրամավարկային պայմանների շարունակական մեղմացման ազդեցություններով, պարտատոմսերի տոկոսադրույքները նվազել են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (1 տարի ժամկետայնությամբ պետական պարտատոմսերի տոկոսադրույքը կազմել է 9.0%՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 10.5%-ի համեմատ, իսկ 10 տարանոց պետական պարտատոմսերինը՝ 9.8%՝ 10.8%-ի համեմատ): ՀՀ դրամով մինչև մեկ տարի ժամկետով ավանդների տոկոսադրույքը դեկտեմբերին կազմել է 8.2%՝ նույնական նախորդ տարվա նույն ամսվա հետ: Վարկերի տոկոսադրույքները աճել են՝ կազմելով 13.2% (2023թ.-ի դեկտեմբերին՝ 12.5%): Հիփոթեքային և սպառողական վարկերի տոկոսադրույքները վերջին ամիսներին կայուն են եղել:

Գծապատկեր 5.2. Ֆինանսական շուկայի տոկոսադրույքները, %



6. Հարկաբյուջետային հատված³: Դեկտեմբերին պետական բյուջեի ծախսերի աճն առաջանցիկ է եկամուտների աճի նկատմամբ: Դեկտեմբեր ամսին պետական բյուջեի եկամուտները կազմել են 310.3 մլրդ դրամ (աճը՝ 7.2%), իսկ ծախսերը՝ 454.2 մլրդ դրամ (աճ՝ 9.3%): Ծախսերն ընդգրկել են 288.1 մլրդ դրամի ընթացիկ ծախսեր և 166 մլրդ դրամի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ: Ընթացիկ ծախսերը նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ աճել են 4.4%-ով, իսկ կապիտալ ծախսերը նվազել են 8.2%-ով:

2024թ.-ի հունվար-դեկտեմբեր ամիսներին պետական բյուջեի եկամուտները կազմել են 2,579.2 մլրդ դրամ (աճը՝ 7.0%), իսկ ծախսերը՝ 2,955.3 մլրդ դրամ (աճը՝ 13.7%):


ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտները դեկտեմբերին ցածր են եղել 2024թ. դեկտեմբերի ցուցանիշից վերջինում առկա մեկանգամյա գործոնների ազդեցությամբ: 2024թ.-ի դեկտեմբերին հարկային եկամուտները կազմել են 241.7 մլրդ դրամ՝ նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ նվազելով 9.6%-ով: Այնուամենայնիվ, պետք է նկատի ունենալ, որ 2023թ. դեկտեմբերին հարկային մուտքերը

³ Հարկային եկամուտների և պետական բյուջեի ծախսերի կազմում ներառված է հիպոթեկային վարկի տոկոսագումարների դիմաց եկամտային հարկի վերադարձը՝ ինչպես հաշվետու, այնպես էլ՝ համեմատվող ժամանակահատվածների համար:




բարձր՝ 25.2% աճ են ունեցել՝ պայմանավորված առանձին մեկանգամյա գործոնների ազդեցությամբ, և վերջիններս չեզոքացնելու դեպքում հարկային եկամուտների դինամիկան 2024թ. դեկտեմբերին բնականոն զարգացումների շրջանակներում է եղել: 2024թ.-ի հունվար-դեկտեմբեր ամիսներին հարկային եկամուտները կազմել են 2,390.9 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 5.1 %-ով:

Գծապատկեր 6.1. Հարկային եկամուտների աճի տեմպը, %




Դեկտեմբեր ամսվա հարկային եկամուտների աճին դրական նպաստումներ են ունեցել սոցիալական վճարները (0.4%-ային կետ), պետական տուրքը (0.5%-ային կետ) և բնապահպանական և բնօգտագործման վճարները (2%-ային կետ): Բացասական նպաստումներ են արձանագրվել ավելացված արժեքի հարկի (3.9%-ային կետ), եկամտային հարկի (3.0%-ային կետ), շահութահարկի (0.4%-ային կետ), մաքսատուրքի (0.1%-ային կետ) և ակցիզային հարկի (1.6%-ային կետ) գծով:

Գծապատկեր 6.2. Հարկային եկամուտների աճին նպաստումները, %-ային կետ



Գծապատկեր 6.3 Պետական բյուջեի եկամուտները, ծախսերը և պակասուրդը



Պետական բյուջեն 2024 թվականին պակասուրդով է ձևավորվել, ինչպես նախանշված է եղել պետական բյուջեում: Դեկտեմբեր ամսին ծախսերը եկամուտներին գերազանցել են 143.9 մլրդ դրամով, իսկ տարվա պակասուրդը կազմել է 376.1 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 188.9 մլրդ դրամ ցուցանիշի դիմաց, սակայն զգալիորեն ցածր 2024թ.-ի բյուջեով նախանշված 482.9 մլրդ դրամ ցուցանիշից: